



Ուղեցույց

Ինչպե՞ս եւ ե՞րբ դիմել Հանրային պաշտպանի
գրասենեակ

Յունուար, 2020թ.

Սույն ուղեցույցը հովանավորուած է «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան դրամաշնորհի շրջանակէն ներս: Այստեղ արտայայտուած է հեղինակի դիրքորոշումը, եւ պարտադիր չէ, որ ան համընկնի «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան դիրքորոշումին հետ

1. Ի՞նչ հաստատություն է հանրային պաշտպանի գրասենեակը

Հանրային պաշտպանի գրասենեակը ՀՀ փաստաբաններու պալատի կողմէ ստեղծուած եւ անոր կազմին մէջ գործող կառուցուածքային ստորաբաժանում է, որ պետութեան կողմէ յատկացուած միջոցներով օրէնքով նախատեսուած պարագաներու կամ օրէնքով նախատեսուած խմբերու մէջ մտնող անձերու կը տրամադրէ իրաւաբանական անվճար օգնութիւն:

2. Որո՞ւն կողմէ կը ցուցաբերուի իրաւաբանական անվճար օգնութիւնը

Իրաւաբանական անվճար օգնութիւնը կը ցուցաբերուի հանրային պաշտպանի գրասենեակին մէջ աշխատող փաստաբաններու՝ հանրային պաշտպաններու կողմէ, որոնք մրցոյթով աշխատանքի կ'ընդունուին:

3. Ի՞նչ կը ներառէ տրամադրուող իրաւաբանական օգնութիւնը

Անվճար օգնութիւնը կը ներառէ՝

1) խորհրդատուութիւնը՝ հայցադիմումներու, դիմումներու, բողոքներու եւ այլ իրաւաբանական բնոյթի դատավարական փաստաթղթերու կազմին մէջ, ներառեալ՝ իրաւաբանական տեղեկատուութեան տրամադրում:

2) ներկայացուցչութիւնը կամ պաշտպանութիւնը՝ քրեական, քաղաքացիական, վարչական եւ սահմանադրական գործերով:

4. Որո՞ւն կը տրամադրուի իրաւաբանական անվճար օգնութիւն

Իրաւաբանական անվճար օգնութիւնը կը տրամադրուի հետեւեալ անձերուն եւ նշուած կարգով՝

ա) «Փաստաբանութեան մասին» ՀՀ օրէնքով սահմանուած 16 խումբ անձերու՝ իրենց դիմումին հիման վրայ,

բ) քրեական հետապնդումի ենթարկուող անձերու (կասկածեալ կամ մեղադրեալ)՝ ՀՀ քրեական դատավարութեան օրէնսգիրքով նախատեսուած պարագաներուն՝ վարոյթը իրականացնող մարմնի (քննիչի, դատարանի) որոշումին կամ դիմումին հիման վրայ,

գ) անգործունակ ճանչցուած անձերու՝ վարոյթը իրականացնող դատարանի որոշումին հիման վրայ:

5. Որո՞նք կրնան անմիջականորեն դիմել հանրային պաշտպանի գրասենեակ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Հանրային պաշտպանի գրասենեակ անմիջականորեն դիմելու եւ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու իրաւունք ունին հետեւեալ 16 խումբ անձերը.

1) Հայաստանի Հանրապետութեան սահմաններու պաշտպանութեան ժամանակ զոհուած (մահացած) զինժառայողի ընտանիքի անդամները.

2) 1-ին եւ 2-րդ խումբի հաշմանդամները.

3) դատապարտեալները.

4) ընտանիքներու անապահովութեան գնահատման համակարգին մէջ հաշուառուած՝ 0-էն բարձր անապահովութեան միաւոր ունեցող ընտանիքի անդամները.

5) Հայրենական մեծ պատերազմի եւ Հայաստանի Հանրապետութեան սահմաններու պաշտպանութեան ժամանակ մարտական գործողութիւններու մասնակիցները.

6) գործազուրկները.

7) միայնակ բնակող կենսաթոշակառուները.

8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, ինչպէս նաեւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներու թուին պատկանող անձերը.

9) փախստականները.

10) Հայաստանի Հանրապետութեան մէջ ժամանակաւոր պաշտպանութիւն ստացածները.

11) անվճարունակ այն ֆիզիկական անձերը, որոնք իրենց անվճարունակութիւնը հաստատող հաւաստի տուեալներ կը ներկայացնեն:

12) հոգեբուժական կազմակերպութեան մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձերը.

13) օրէնքով սահմանուած կարգով առեւանգումի եւ շահագործումի ենթարկուած զոհերու նոյնացման յանձնաժողովի կողմէ զոհ կամ յատուկ կարգի զոհ ճանչցուած անձերը.

14) Հայաստանի Հանրապետութեան մէջ ապաստան հայցողները.

15) խոշտանգումէ տուժած անձերը՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիական օրէնսգիրքի 1087.3-րդ յօդուածով սահմանուած կարգով փոխհատուցում ստանալու նպատակով.

16) «Ընտանիքին մեջ բռնության կանխարգելման, ընտանիքին մեջ բռնության ենթարկուած անձերու պաշտպանութեան եւ ընտանիքին մեջ համերաշխութեան վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի համաձայն ընտանիքին մեջ բռնութեան ենթարկուած անձերը:

6. Ո՞ր պարագային չի կրնար ցուցաբերուիլ իրաւաբանական օգնութիւն

Իրաւաբանական անվճար օգնութիւն չի կրնար տրուիլ՝

1) ձեռնարկատիրական բնոյթի գործերով (ներառեալ՝ համատեղ ձեռնարկատիրական վեճերով):

2) նուազագոյն աշխատավարձի հազարապատիկը (մէկ միլիոն ՀՀ դրամը) գերազանցող գոյքային (գումարի) պահանջով գործերով, բացառութեամբ այն գործերուն, ուր անձը հանդէս կու գայ իբրեւ պատասխանող կամ պատասխանողի կողմի մեջ հանդէս եկող երրորդ անձ:

3) եթէ առկայ են դիմող անձի անվճարունակութիւնը ժխտող փաստական հաւաստի տուեալներ:

Իրաւաբանական անվճար օգնութիւն կրնայ չցուցաբերուիլ նաեւ ակնյայտ անօրինական եւ անհիմն պահանջի գործերով, երբ անձը հանդէս կու գայ հայցուոր կամ դիմող կողմին մեջ:

Իրաւաբանական անվճար օգնութիւն կրնայ չտրամադրուիլ, իսկ ցուցաբերուող օգնութիւնը կրնայ դադրիլ նաեւ «Փաստաբանութեան մասին» ՀՀ օրէնքով, փաստաբանի վարքագիծի կանոնադիրքով, հանրային պաշտպանի գրասենեակի կոնոնակարգով, ինչպէս նաեւ իրաւաբանական անվճար օգնութեան տրամադրումը կազմակերպելու մասին կարգով նախատեսուած պարագաներուն եւ հիմքերով:

7. Ի՞նչ պարագայի անձը կը համարուի վճարունակ եւ անոր չի տրամադրուիր իրաւաբանական անվճար օգնութիւն

Վճարունակ կը համարուի այն անձը, որ ունի բաւարար եկամուտ, համատեղ բնակող ընտանիքի աշխատող անդամ, ինչպէս նաեւ բացի անձնական բնակարանէն, իբրեւ սեփականութիւն ունի այլ անշարժ գոյք կամ նուազագոյն աշխատավարձի հազարապատիկը (մէկ միլիոն ՀՀ դրամը) գերազանցող արժէքի փոխադրամիջոց:

8. Ի՞նչպէս դիմել հանրային պաշտպանի գրասենեակ

Իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթուղթով անձամբ ներկայանալ հանրային պաշտպանի

գրասենեակի նստավայրեր, ներկայացնել համապատասխան դիմում՝ կցելով իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու իրաւունք ունեցող անձերու համապատասխան խումբին պատկանելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը (փաստաթուղթերը):

Հանրային պաշտպանի գրասենեակ հնարաւոր է դիմել նաեւ լիազօր ներկայացուցիչի (օրինակ՝ նոտարական վաւերացումով լիազօրուած), ինչպէս նաեւ փոստի, էլեկտրոնային փոստի, հանրային պաշտպանի գրասենեակի կայքէջի եւ հեռապատճեն ուղարկելու միջոցով՝ ներկայացնելով ստորագրուած դիմում եւ անհրաժեշտ փաստաթղթերը: Փոստի, էլեկտրոնային փոստի, հանրային պաշտպանի գրասենեակի կայքէջի միջոցով եւ հեռապատճենով ուղարկուած դիմումը բաւարարելու պարագային դիմողը պետք է հանրային պաշտպանի գրասենեակ ներկայանայ բերանացի խորհրդատուութիւն ստանալու նպատակով:

Յատուկ պարագաներու, դիմող անձի տեղաշարժման խնդիրներու վերաբերեալ հաւաստի տուեալներու առկայութեան պարագային իրաւաբանական անվճար օգնութիւն ցուցաբերելու նպատակով կրնան իրականացվել տնայցեր:

9. Ինչպէ՞ս կրնան հանրային պաշտպանի գրասենեակ դիմել փակ հաստատութիւններու մէջ պահուող անձերը

Փակ հաստատութիւններու մէջ պահուող անձերը, բացի ընդհանուր կարգէն, հանրային պաշտպանի գրասենեակ կրնան դիմել նաեւ հաստատութեան վարչակազմի միջոցով:

Փակ հաստատութիւններու մէջ պահուող անձին իրաւաբանական անվճար օգնութիւն կը տրամադրուի այդ հաստատութիւն կատարուած հանրային պաշտպանի այցի միջոցով:

10. Ո՞ր կը գտնուին հանրային պաշտպանի գրասենեակի նստավայրերը.

Հանրային պաշտպանի գրասենեակը ներկայացուած է (նստավայրեր ունի) ինչպէս Երեւան, այնպէս ալ բոլոր մարզերուն մէջ:

Հանրային պաշտպանի գրասենեակի Երեւանի նստավայրը տեղակայուած է Զաքիեան 7-2 հասցէին վրայ:

Մարզերու մէջ հանրային պաշտպանի գրասենեակի նստավայրերը տեղակայուած են հետեւեալ հասցէներու վրայ.

Արարատի մարզ	քաղաք Արտաշատ, Օգոստոսի 23-ի փող., 60 շ. (Արարատի մարզպետարան)
Արմավիրի մարզ	քաղաք Արմավիր, Հանրապետության 28 քաղաք Էջմիածին, Կամոյի 6
Գեղարքունիքի մարզ	քաղաք Գաւառ, Սայադեան 2/1 շ. քաղաք Սեւան, Աբովեան փող., թիվ 2/2 քաղաք Վարդենիս, Անդրէսեան 4
Լոռիի մարզ	քաղաք Վանաձոր, Միասնիկեան 6/37 քաղաք Ալավերդի, Թումանեան 8
Կոտայքի մարզ	քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, վարչական շէնք (Կոտայքի մարզպետարան) քաղաք Աբովեան, Երիտասարդական փող., 5/3 քաղաք Եղվարդ, Երեւանեան փող., 1 շէնք
Շիրակի մարզ	քաղաք Գիւմրի, Անկախութեան հրապ. 9
Վայոց ձորի մարզ	քաղաք Եղեգնաձոր, Անդրանիկի փող., 12/4
Սիւնիքի մարզ	քաղաք Կապան, Ա. Մանուկեան 1ա, 19 քաղաք Գորիս, Մաշտոցի 3 փող., թիւ 2 վարչ. շ., 2-րդ յարկ

11. Ի՞նչ փաստաթուղթեր պետք է ներկայացնեն Հայաստանի Հանրապետության սահմաններու պաշտպանութեան ժամանակ զոհուած (մահացած) զինձառայողի ընտանիքի անդամները իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Հայաստանի Հանրապետութեան սահմաններու պաշտպանութեան ժամանակ զոհուած (մահացած) զինձառայողի ընտանիքի անդամները իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պետք է ներկայացնեն ՀՀ պաշտպանութեան նախարարութեան կողմէ տրուած տեղեկանքը՝ ՀՀ սահմաններու պաշտպանութեան ժամանակ զոհուած (մահացած) զինձառայողի ընտանիքի անդամ հանդիսանալու վերաբերեալ եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

12. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնէ 1-ին կամ 2-րդ խումբի հաշմանդամութիւն ունեցող անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

1-ին կամ 2-րդ խումբի հաշմանդամություն ունեցող անձը իրաւաբանական անվճար օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պէտք է ներկայացնէ հաշմանդամութեան փաստաթուղթը (հաշմանդամութեան վկայական, հաշմանդամութեան վերաբերեալ տեղեկանք) եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

13. Ի՞նչ փաստաթուղթ պէտք է ներկայացնէ դատապարտեալը իրաւաբանական անվճար օգնություն ստանալու համար

Ազատութենէ զրկուած դատապարտեալին իրաւաբանական անվճար օգնություն կը տրամադրուի համապատասխան քրեակատարողական հիմնարկի ուղեկցական գրութեամբ հանրային պաշտպանի գրասենեակ ստացուած դատապարտեալի դիմումին հիման վրայ: Ասոր պէտք է կցուի դատապարտեալ ըլլալու հանգամանքը հաստատող փաստաթուղթը (օրինակ՝ օրինական ուժի մէջ մտած դատավճիռ) եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

14. Ի՞նչ փաստաթուղթ պէտք է ներկայացնէ ընտանիքներու անապահովութեան գնահատման համակարգին մէջ հաշուառուած՝ 0-էն բարձր անապահովութեան միաւոր ունեցող ընտանիքի անդամը իրաւաբանական անվճար օգնություն ստանալու համար

Ընտանիքներու անապահովութեան գնահատման համակարգին մէջ հաշուառուած՝ 0-էն բարձր անապահովութեան միաւոր ունեցող ընտանիքի անդամը իրաւաբանական անվճար օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պէտք է ներկայացնէ սոցիալական ապահովութեան տարածքային բաժնի կողմէ տրուած տեղեկանքը ընտանիքներու անապահովութեան գնահատման համակարգին մէջ հաշուառուած ըլլալու վերաբերեալ եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

15. Ի՞նչ փաստաթուղթ պէտք է ներկայացնեն Հայրենական մեծ պատերազմի եւ Հայաստանի Հանրապետութեան սահմաններու պաշտպանութեան ժամանակ մարտական գործողություններու մասնակիցները իրաւաբանական անվճար օգնություն ստանալու համար

Հայրենական մեծ պատերազմի եւ Հայաստանի Հանրապետութեան սահմաններու պաշտպանութեան ժամանակ մարտական գործողություններու մասնակիցը իրաւաբանական անվճար օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պէտք է ներկայացնէ Հայրենական մեծ պատերազմի մասնակիցի վկայական կամ ՀՀ պաշտպանութեան նախարարութեան կողմէ տրուած՝

Հայաստանի Հանրապետության սահմաններու պաշտպանության ժամանակ մարտական գործողություններու մասնակիցի կարգավիճակը հաստատող վկայականը եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

16. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնեն գործազուրկները իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Գործազուրկները իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պետք է ներկայացնեն զբաղուածութեան պետական ծառայութեան կողմէ տրուած՝ գործազրկութեան վերաբերեալ տեղեկանք եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

17. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնէ մինակ բնակող կենսաթոշակառուն իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Մինակ բնակող կենսաթոշակառուն իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պետք է ներկայացնէ կենսաթոշակի վկայականը կամ կենսաթոշակի գրքոյկը, բնակութեան վայրէն (համատիրութիւն, գիւղապետարան, ոստիկանութեան՝ բնակչութեան տեղական արձանագրութիւնը վարող տարածքային մարմին) տրուած տեղեկանքը ընտանիքի փաստացի կազմի (մինակ բնակելու) մասին տեղեկանք եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

18. Ինչպէ՞ս կը տրամադրուի իրաւաբանական անվճար օգնութիւնը առանց ծնողական խնամքի մնացած երեխաներուն, ինչպէս նաեւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներու թիւին պատկանող անձերուն:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներուն իրաւաբանական անվճար օգնութիւն տրամադրելու համար հանրային պաշտպանի գրասենեակ կրնայ դիմել երեխայի խնամակալը՝ ներկայացնելով երեխայի ծննդեան վկայականը, ծնողազուրկ ըլլալու մասին տեղեկանքը կամ ծնողներու մահուան վկայականները, խնամակալ նշանակուելու մասին որոշումը կամ խնամակալի վկայականը:

Յատուկ պարագաներու, հաշուի առնելով առանց ծնողական խնամքի մնացած երեխայի լաւագոյն շահը պաշտպանելու անհրաժեշտութիւնը, երեխային կրնայ իրաւաբանական անվճար օգնութիւն ցուցաբերուիլ անոր կամքին համաձայն, ինչպէս նաեւ տարածքային կառավարման պետական մարմնի կամ խնամակալութեան եւ հոգաբարձութեան կամ այլ իրաւասու մարմիններու միջնորդութեամբ:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներու թիւին պատկանող անձերը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի

գրասենեակ պետք է ներկայացնեն խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմնի կողմէ տրուած տեղեկանքը իբրեւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներու թիւին պատկանող անձ հաշուառուած ըլլալու մասին եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

19. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնէ փախստականի կարգավիճակ ունեցող անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Փախստականի կարգավիճակ ունեցող անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պետք է ներկայացնէ ճամբորդական փաստաթուղթը:

20. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնէ Հայաստանի Հանրապետութեան մէջ ժամանակաւոր պաշտպանութիւն ստացած անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Հայաստանի Հանրապետութեան մէջ ժամանակաւոր պաշտպանութիւն ստացած անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պետք է ներկայացնէ գաղթականներու (միգրացիոն) պետական ծառայութեան կողմէ տրուած՝ ժամանակաւոր պաշտպանութիւն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթը՝ ժամանակաւոր ապաստանի վկայականը:

21. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնէ անձը իբրեւ անվճարունակ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Իբրեւ անվճարունակ ֆիզիկական անձ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար անձը հանրային պաշտպանի գրասենեակ պետք է ներկայացնէ իր անվճարունակութիւնը հաստատող հաւաստի տուեալներ եւ այդ մասին տայ գրաւոր յայտարարութիւն՝ հաւաստելով, որ չունի բաւարար եկամուտ, համատեղ բնակող ընտանիքի աշխատող անդամ, ինչպէս նաեւ բացի անձնական բնակարանէն, իբրեւ սեփականութիւն չունի այլ անշարժ գոյք կամ նուազագոյն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժէքի փոխադրամիջոց, ինչպէս նաեւ պետք է ներկայացնէ անձը հաստատող փաստաթուղթ:

Ընդ որում, «Փաստաբանութեան մասին» ՀՀ օրէնքի կարգաւորման ուժով՝ հանրային պաշտպանի գրասենեակի ղեկավարը կրնայ դիմել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններուն կամ տնտեսավարող անհատներուն՝ անվճարունակ անձերու անվճարունակութեան փաստը ստուգելու համար

անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով, եւ հակառակը պարզելու պարագային՝ դադրեցնել տրամադրուող օգնությունը:

22. Ինչպէ՞ս կը տրամադրուի իրաւաբանական անվճար օգնութիւն հոգեբուժական կազմակերպութեան մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձերուն

Հոգեբուժական կազմակերպութեան մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձին իր հիւանդանոցին մէջ գտնուելու եւ բուժման հետ կապուած հարցերու վերաբերեալ կրնայ տրամադրուիլ իրաւաբանական անվճար օգնութիւն համապատասխան կազմակերպութեան միջնորդութեամբ, այդ անձի դիմումով կամ դատարանի որոշումով:

Առանձնաբար, հաշուի առնելով հոգեբուժական կազմակերպութեան մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձի իրաւունքներու պաշտպանութեան անհրաժեշտութիւնը, անոր կրնայ իրաւաբանական անվճար օգնութիւն ցուցաբերուիլ խնամակալութեան եւ հոգաբարձութեան կամ այլ իրաւասու մարմնի միջնորդութեամբ:

23. Ի՞նչ փաստաթուղթ պէտք է ներկայացը Հայաստանի Հանրապետութեան մէջ ապաստան հայցող անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Հայաստանի Հանրապետութեան մէջ ապաստան հայցող անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պէտք է ներկայացնէ ոստիկանութեան կողմէ տրուած՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը:

24. Ի՞նչ փաստաթուղթ պէտք է ներկայացնէ առեւանգումի եւ շահագործման ենթարկուած զոհերու նոյնացման յանձնաժողովի կողմէ օրէնքով սահմանուած կարգով զոհ կամ յատուկ կարգի զոհ ճանչցուած անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Առեւանգումի եւ շահագործման ենթարկուած զոհերու նոյնացման յանձնաժողովի կողմէ օրէնքով սահմանուած կարգով զոհ կամ յատուկ կարգի զոհ ճանչցուած անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պէտք է ներկայացնէ առեւանգումի եւ շահագործումի ենթարկուած զոհերու նոյնացման յանձնաժողովի որոշումը զոհ կամ յատուկ կարգի զոհ ճանչնալու մասին եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

25. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնե՞լ խոշտանգումէ տուժած անձը ՀՀ քաղաքացիական օրէնսգիրքի 1087.3-րդ յօդուածով սահմանուած կարգով փոխհատուցում ստանալու հարցով իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Խոշտանգումէ տուժած անձը ՀՀ քաղաքացիական օրէնսգիրքի 1087.3-րդ յօդուածով սահմանուած կարգով փոխհատուցում ստանալու հարցով իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պետք է ներկայացնե՞լ իր՝ իբրեւ տուժած անձի նկատմամբ ՀՀ քրեական օրէնսգիրքի 309.1 յօդուածով նախատեսուած արարք կատարուած ըլլալու վերաբերեալ դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը կամ անոր նկատմամբ ՀՀ քրեական օրէնսգիրքի 309.1 յօդուածով նախատեսուած արարք կատարելու համար ոչ արդարացնող հիմքով քրեական գործի յարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարոյթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադրեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացուցած՝ չվերացուած կամ չբողոքարկուած որոշումը կամ խոշտանգման փաստը հաստատելու մասին ՀՀ մասնակցութեամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած դատական արձանագրութիւնը, ինչպէս նաեւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

26. Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնե՞լ «Ընտանիքի մէջ բռնութեան կանխարգելման, ընտանիքին մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութեան եւ ընտանիքին մէջ համերաշխութեան վերականգնման մասին» ՀՀ օրէնքի համաձայն ընտանիքին մէջ բռնութեան ենթարկուած անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

«Ընտանիքին մէջ բռնութեան կանխարգելման, ընտանիքին մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութեան եւ ընտանիքին մէջ համերաշխութեան վերականգնման մասին» ՀՀ օրէնքի համաձայն՝ ընտանիքին մէջ բռնութեան ենթարկուած անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պետք է ներկայացնե՞լ «Ընտանիքին մէջ բռնութեան կանխարգելման, ընտանիքին մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութեան եւ ընտանիքին մէջ համերաշխութեան վերականգնման մասին» ՀՀ օրէնքի համաձայն տրուած՝ նախագոյշացման, անյետաձգելի միջամտութեան պաշտպանական որոշումը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը՝ ընտանիքին մէջ բռնութենէ տուժելու մասին, ինչպէս նաեւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

27. Ո՞ւր պետք է դիմել քրեական հետապնդումի ենթարկուող անձը (կասկածեալը կամ մեղադրեալը), եթե կը փափաքի ունենալ պաշտպան, սակայն չի կրնար հրաւիրել պաշտպան

Քրեական գործով կասկածեալի կամ մեղադրեալի կարգավիճակ ունենալու եւ հանրային պաշտպանի գրասենեակէն պաշտպան հրաւիրելու ցանկութեան պարագային՝ անհրաժեշտ է դիմել քրեական վարոյթը իրականացնող քննիչին կամ դատարանին:

Քրեադատավարական կարգաւորումներու համաձայն՝ քրեական գործով վարոյթը իրականացնող քննիչը կամ դատարանը պարտաւոր են ապահովել պաշտպանի պարտադիր մասնակցութիւնը, երբ այդպիսի ցանկութիւն յայտնած է կասկածեալը կամ մեղադրեալը:

Հանրային պաշտպանի գրասենեակին անմիջականօրէն դիմելու պարագային հանրային պաշտպանի գրասենեակը չի կրնար իրականացնել կասկածեալի կամ մեղադրեալի պաշտպանութիւնը՝ անգամ, երբ տուեալ անձը կը պատկանի իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու իրաւունք ունեցող անձերու խումբին:

Քրեական գործով կասկածեալի եւ մեղադրեալի պաշտպանութիւնը կ'իրականացուի բացառապէս քրեական վարոյթը իրականացնող մարմնի միջնորդութեամբ:

28. Ի՞նչ կարգով ցուցաբերուած է իրաւաբանական անվճար օգնութիւնը քրեական գործով տուժողի կարգավիճակ ունեցող անձին

Քրեական գործով տուժողի կարգավիճակ ունեցող անձերու իրաւաբանական անվճար օգնութիւն կը տրամադրուի ընդհանուր հիմունքներով՝ հանրային պաշտպանի գրասենեակ դիմելու պարագային՝ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու իրաւունք ունեցող 16 խումբ անձերու:

29. Կրնա՞յ արդեօք օգնութիւն ցուցաբերուիլ քրեական գործով վկայի կարգավիճակ ունեցող անձին, եթէ վերջինս ունի իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու իրաւունք վերապահող կարգավիճակ

Քրեական գործով վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձին իրաւաբանական անվճար օգնութիւն չի կրնար ցուցաբերուիլ, քանի որ «Փաստաբանութեան մասին» ՀՀ օրէնքի կարգաւորումներու համաձայն՝ վկային իրաւաբանական օգնութիւն ցոյց տալը չ'ընդգրկուիլ հանրային պաշտպանի գրասենեակին օրէնքով վերապահուած գործունէութեան՝ խորհրդատուութիւն տրամադրելու եւ ներկայացուցչութիւն իրականացնելու շրջանակներուն մէջ:

Բացառություն են միայն կասկածի շուրջ հարցաքննուող վկաները, որոնք կ'օգտուին կասկածեալի իրաւունքներէն: Վերջիններու հանրային պաշտպան կը տրամադրուի քրեական վարոյթը իրականացնող մարմնի ղիմումով կամ որոշումով ներկայացուած պահանջով:

30. Կրնա՞յ արդեօք անձը ընտրել կամ փոխել իրեն իրաւաբանական անվճար օգնութիւն ցուցաբերող հանրային պաշտպանը

Գործերը հանրային պաշտպաններուն կը մակագրուին հանրային պաշտպանի գրասենեակի ղեկավարի կողմէ՝ ըստ հանրային պաշտպաններու մասնագիտացման, զբաղուածութեան եւ ծանրաբեռնուածութեան՝ արդարութեան սկզբունքի հիման վրայ:

Իրաւաբանական անվճար օգնութիւն ստացող անձը չի կրնար իր հայեցողութեամբ ընտրել կամ փոխել արդէն իսկ նշանակուած հանրային պաշտպանը, իսկ նշանակուած հանրային պաշտպանէն հրաժարիլը կ'ենթադրէ ընդհանրապէս հանրային պաշտպանութենէ հրաժարում:

31. Ե՞րբ կարելի է փոխել արդէն իսկ նշանակուած հանրային պաշտպանը

Հանրային պաշտպանի փոխարինումը (գործի վերամակագրումը) տեղի կ'ունենայ այն պարագային, երբ՝

1) գործը վարող հանրային պաշտպանը ազատուած է աշխատանքէն.

2) առկայ է գործը վարող հանրային պաշտպանի վստահորդի եւ նոյն հանրային պաշտպանի այլ վստահորդի շահերու միջեւ հակասութիւն՝ նոյն գործով.

3) առկայ է ՀՀ քրեական դատավարութեան օրէնսգրքով նախատեսուած հանրային պաշտպանի մասնակցութիւնը բացառող այլ հիմք:

Հանրային պաշտպանի փոխարինումը (գործի վերամակագրումը) կամ մակագրումը նաեւ այլ հանրային պաշտպանի, կրնայ կատարուիլ այն պարագային, երբ՝

1) գործը վարող հանրային պաշտպանը կը գտնուի արձակուրդի մէջ եւ գործի բնոյթէն ելնելով անհրաժեշտ է փոխարինել հանրային պաշտպանը.

2) քննչական գործողութիւնները կը կատարուին ՀՊԳ տուեալ նստավայրի տարածքէն 100 կմ աւելի հեռաւորութեան վրայ.

3) մեղադրեալը արգելանքի տակ կը պահուի տուեալ նստավայրի տարածքէն 100 կմ աւելի հեռաւորութեան վրայ.

4) փոխուած է ընդդատութիւնը կամ քննչական ենթակայութիւնը.

5) մարզի հանրային պաշտպանի վարած քրեական գործը անցած է վերաքննութեան կամ վճռաբեկութեան փուլ.

6) գործը վարող հանրային պաշտպանի ծանրաբեռնուածութիւնը չ'ապահովեր գործը որակեալ եւ ողջամիտ ժամկետով վարելը, բացառապէս այն պարագային, երբ գործը վերամակագրուած է էականօրէն քիչ ծանրաբեռնուած հանրային պաշտպանի.

7) վստահորդը կը բողոքէ գործը վարող հանրային պաշտպանէն եւ կը ներկայացնէ ապացոյցներ հանրային պաշտպանի առերեւոյթ ոչ բարեխիղճ աշխատանքի վերաբերեալ.

8) հանրային պաշտպանը կը բողոքէ վստահորդէն՝ պայմանաւորուած իր նկատմամբ վստահորդի ոչ բարեկիրթ, գռեհիկ եւ ակնյայտ անյարգալից վերաբերմունքով կամ այլ անօրինական գործողութեամբ.

9) վստահորդի եւ հանրային պաշտպանի միջեւ ծագած է անհամաձայնութիւն կամ վէճ, որ կրնայ ազդել գործի յետագայ ընթացքին վրայ.

10) տուեալ գործի վարումը առաւել նպատակայարմար է յանձնարարել այլ հանրային պաշտպանի կամ քանի մը հանրային պաշտպաններու՝ ելլելով մասնագիտացումէն, գործի բարդութենէն, առանձնահատկութենէն կամ այլ հանգամանքներէ:

32. Ի՞նչ ժամկետներու մէջ կը տրամադրուի իրաւաբանական օգնութիւնը

Հանրային պաշտպաններու կողմէ իրաւաբանական անվճար օգնութիւնը կը տրամադրուի ՀՀ փաստաբաններու պալատի նախագահի 28.09.2018թ. № 357-Լ որոշումով հաստատուած՝ «Իրաւաբանական անվճար օգնութեան տրամադրումը կազմակերպելու մասին կարգ»-ի 5-րդ գլուխով սահմանուած ժամկետներուն մէջ:

33. Որո՞ն կամ ո՞ր պէտք է դիմել հանրային պաշտպանէն դժգոհութիւններ ունենալու պարագային

Հանրային պաշտպաններու աշխատանքին վրայ հսկողութիւն կ'իրականացնէ գրասենեակի ղեկավարը (տեղակալը), իսկ հանրային պաշտպանի գրասենեակի գործունէութեան վրայ վերահսկողութիւն կ'իրականացնէ ՀՀ փաստաբաններու պալատի նախագահը (տեղակալը):

Հանրային պաշտպաններու գործողութիւններու կամ անգործութեան առնչութեամբ դժգոհութիւններ ունենալու պարագային պէտք է դիմել հանրային պաշտպանի գրասենեակի ղեկավարին կամ անոր տեղակալին:

Հանրային պաշտպանի գրասենեակի ղեկավարի որոշումները, գործողութիւնները եւ անգործութիւնը կրնայ բողոքարկուիլ ՀՀ փաստաբաններու պալատի նախագահին:

34. Ո՞ր պետական մարմինն կ'ենթարկուին հանրային պաշտպանի գրասենեակը կամ հանրային պաշտպանները

Թեև հանրային պաշտպանի գրասենեակը ծառայություն կը մատուցէ պետական միջոցներով (պատուերով), սակայն անկախ է եւ չ'ենթարկուի որեւէ պետական գերատեսչութեան: Իրաւաբանական օգնութիւն ցուցաբերելու ատեն հանրային պաշտպանները կ'ենթարկուին բացառապէս փաստաբանի վարքագիծին առաջադրուող համընդհանուր պահանջներուն եւ գրասենեակի ներքին կարգապահական կանոններուն: